ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2022 թվականի կարիքների համար բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «12» մայիսի 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Լիլիթ Մանուկյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության պետ

հանձնաժողովի անդամներ՝

Հրաչ Բաբախանյան ՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության ավագ մասնագետ

Բացակա էր՝

Արտակ Օհանյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության տնտեսվար

հանձնաժողովի քարտուղար՝

Գոռ Եսայան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/06» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 8-րդ օրվա (10.05.2022թ.) ժամը 10:00-ն,

1.2 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

1.3 էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 11.05.2022 թ., ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայության գնի վերաբերյալ.

Չափաբաժնի N	անվանումը	Նախահաշվային գին (ՀՀ դրամ)
1	Բենզին ռեգուլյար	3.347.500

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
1	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	ք. Երևան, Տպագրիչների 8
2	«ՖԼԵԾ» ՍՊԸ	ք. Երևան, Ե. Կողբացու 30

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6.«ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/06» » ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	2784004.17	20%	3340805	2784004.17	20%	3340805	ընտրված
	«ՖԼԵԾ» ՍՊԸ	2984854.17	20%	3581825	2984854.17	20%	3581825	մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 11.05.2022թ.-ին, և Համակարգի կողմից առաջին տեղն զբաղեցրած մասնակից է համարվել **«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ**-ն

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարության Հավելված 1 և իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2/ առկայության մասին.

«ՖԼԵԾ» ՍՊԸ-ի և «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը **/դիմում-հայտարարության Հավելված 1 և իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2/**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 2, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

8.1 «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի և «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա պահանջվող փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 2, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը ***որոշեց* «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-*ին հայտարարել ընտրված մասնակից,***

Ընդունվել է որոշում. կողմ՝ 2, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր, այնուհետև պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Լիլիթ Մանուկյան

Անդամ՝ _____ Հրաչ Բաբախանյան

Քարտուղար՝ _____ Գոռ Եսայան